ԵՐԵՎԱՆԻ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ
«ՆՈՐՔ-ՄԱՐԱՇ ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՓԲԸ

Հայաստանի Հանրապետություն, Երևան, 0047,
Նորք, Ա.Արմենակյան փողոց, 108/4
Հեռախոս՝ (+37410) 655930
Էլ.փոստ՝ norkmarashmc@gmail.com

"Nork-Marash" Medical Center
Armenakyan str. 108/4, Yerevan 0047, Armenia
Phone: (+37410) 655930
E-mail: norkmarashmc@gmail.com

Медицинский Центр «Норк-Мараш»
РА, Ереван, 0047, ул. А.Арменакяна 108/4
Телефон: (+37410) 655930
Эл.почта: norkmarashmc@gmail.com

N 08-198/26

«16» հունիսի 2026թ.

<< ՆԱՏԻՎԱ >> ՍՊԸ տնօրեն
Պարոն Պ. Արղուշյանին
ք. Գյումրի, Վ. Սարգսյան 1 թաղ. 96/1
հեռ. 093-699026
էլ. Փոստ hakob012015@yandex.ru

Ծանուցում

(թիվ ՆՄԲԿ-ԷԱՃԱՊՁԲ-26/64-5>> ծածկագրով պայմանագիրը միակողմանի մասնակի լուծելու մասին)

<<Նորք-Մարաշ>> բժշկական կենտրոն>> ՓԲԸ-ի (այսուհետ նաև՝ Պատվիրատու) և << ՆԱՏԻՎԱ >> ՍՊԸ-ի (այսուհետ նաև՝ Ընկերություն) միջև 20.04.2026 թվականին կնքվել է ապրանքի մատակարարման թիվ ՆՄԲԿ-ԷԱՃԱՊՁԲ-26/64-5 ծածկագրով պայմանագիրը (այսուհետ նաև՝ Պայմանագիր):

Պայմանագրի տարբեր չափաբաժիններով նախատեսված է մատակարարել Ապրանքներ, այդ թվում 10-րդ և 11-րդ չափաբաժիններով նախատեսված են 50-ական քանակով սավաններ:

Պայմանագրի պայմանների համաձայն, Պայմանագրի շրջանակներում Ապրանքի մատակարարումն իրականացվելու է 2026թ. տարվա ընթացքում պայմանագրի ուժի մեջ մտնելու օրվանից հաշված 40 օրվա ընթացքում: Մատակարարվող ապրանքները պետք է լինեն նոր: Ապրանքի մատակարարումը՝ բեռնափոխադրումը, բեռնաթափումը և տեղափոխումը մինչև համապատասխան պահեստ, իրականացվում է Կատարողի ուժերով և միջոցներով ք. Երևան, Արմենակյան 108/4 հասցեով:

Պայմանագրի կատարման ժամկետը Կողմերի փոխադարձ համաձայնությամբ 29.05.2026 թվականին երկարացվել է 10 օրով, ուստի պայմանագրի կատարման ժամկետի վերջին օրը հանդիսանում էր 09.06.2026 թվականը:

09.06.2026 թվականին Ընկերությունը A 5857945199 հարկային հաշվով մատակարարել է պայմանագրով նախատեսված ապրանքները՝ բացառությամբ 10-րդ և 11-րդ չափաբաժիններով նախատեսվածների:

11.06.2026 թվականին Պատվիրատուն գրությամբ դիմել է Ընկերությանը, տրամադրելով ողջամիտ ժամկետ պայմանագիրը ամբողջությամբ կատարելու համար, այն է. 15.06.2026 թվականը ներառյալ:

Նույն օրը(11.06.20262.) Ընկերությունը գրությամբ դիմել է Պատվիրատուին տեղեկացնելով, որ չի կարող մատակարարել 10-րդ և 11-րդ չափաբաժիններով նախատեսված ապրանքները, ինչպես նաև այն մասին, որ պատրաստ է Պատվիրատուին վճարել համապատասխան ապահովումների գումարները:

Նախատեսված ժամկետում Ընկերությունը չի մատակարարել նշված չափաբաժինների ապրանքները և փաստացի էականորեն խախտել է Պայմանագիրը:

Պայմանագրի համապատասխան կետերով սահմանված է հետևյալը.

<<2.1.Գնորդն իրավունք ունի.

2.1.1 Ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 5 օրից ավելի:

2.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք՝

ա) պահանջել հատուցելու ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չընդունել ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ապրանքը պայմանագրին համապատասխանող որակի ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.3 կետով նախատեսված տուգանքը. >>

<<2.1.7 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

2.1.7.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 5 օրից ավելի>>

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 345-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Պարտավորության ուժով մի անձը (պարտապանը) պարտավոր է մեկ այլ անձի (պարտատիրոջ) օգտին կատարել որոշակի գործողություն. այն է՝ վճարել դրամ, հանձնել գույք, կատարել աշխատանք, մատուցել ծառայություն և այլն, կամ ձեռնպահ մնալ որոշակի գործողություն կատարելուց, իսկ պարտատերն իրավունք ունի պարտապանից պահանջել կատարելու իր պարտականությունը»:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 408-րդ հոդվածի համաձայն՝ «Պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը:»:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 466-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ «Պայմանագիրը լրիվ կամ մասնակի կատարելուց միակողմանի հրաժարվելու դեպքում, երբ պայմանագրից հրաժարվելը թույլատրվում է օրենքով կամ կողմերի համաձայնությամբ, պայմանագիրը համապատասխանաբար համարվում է լուծված կամ փոփոխված:»:

Պայմանագրի 8.11-րդ կետի համաձայն՝ Վաճառողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Գնորդը հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Վաճառողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Գնորդը այն ուղարկվում է նաև Վաճառողի էլեկտրոնային փոստին:

Ելնելով վերոգրյալից՝ ինչպես նաև հաշվի առնելով այն հանգամանքը, որ Ընկերությունը էականորեն խախտել է պայմանագրով սահմանված պարտավորությունները, այն է՝ սահմանված ողջամիտ ժամկետում չի մատակարարել պայմանագրով նախատեսված ապրանքները, «Նորք-Մարաշ» բժշկական կենտրոն» ՓԲԸ-ն որոշեց **միակողմանի մասնակի հրաժարվել պայմանագրից (10-րդ և 11-րդ չափաբաժինների մասով)**՝ համարելով այն միակողմանի լուծված, իսկ պատշաճ ծանուցումն ապահովելու նպատակով՝ կիրառել ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» կարգի 33-րդ կետի 17-րդ ենթակետով և Պայմանագրի 8.11-րդ կետով սահմանված դրույթները:

«Գնումների մասին» օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու դեպքում, պատվիրատուի ղեկավարի պատճառաբանված որոշման հիման վրա լիազորված մարմինը մասնակցին ներառում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Ընդ որում սույն կետում նշված որոշումը պատվիրատուի ղեկավարը կայացնում է գնման ընթացակարգը չկայացած հայտարարվելու կամ կնքված պայմանագրի վերաբերյալ հայտարարությունը հրապարակելու կամ պայմանագիրը միակողմանի լուծելու մասին հայտարարությունը (ծանուցումը) հրապարակելու օրվան հաջորդող տասներորդ օրը: Որոշումը կայացվելուն հաջորդող օրը այն գրավոր տրամադրվում է լիազորված մարմնին և մասնակցին: Լիազորված մարմինը մասնակցին ներառում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում որոշումն ստանալուն հաջորդող քառասուներորդ օրվան հաջորդող հինգերորդ օրը, իսկ որոշումն ստանալուն հաջորդող քառասուներորդ օրվա դրությամբ մասնակցի կողմից որոշման բողոքարկման վերաբերյալ հարուցված և չավարտված դատական գործի առկայության դեպքում՝ տվյալ դատական գործով եզրափակիչ դատական ակտն ուժի մեջ մտնելու օրվան հաջորդող հինգերորդ օրը, եթե դատական քննության արդյունքով որոշման կատարման հնարավորությունը չի վերացել:

Ընդ որում, եթե՝

- լիազորված մարմնին որոշումը ներկայացվելու վերջնաժամկետը լրանալու օրվա դրությամբ մասնակիցը կամ պայմանագիրը կնքած անձը վճարել է պայմանագրի և որակավորման ապահովման գումարը (1150001612200100 հաշվեհամարին), ապա պատվիրատուն տվյալ մասնակցին ցուցակում ներառելու պատճառաբանված որոշումը չի ներկայացնում լիազորված մարմին.

- մասնակցի կամ պայմանագիրը կնքած անձի կողմից պայմանագրի և որակավորման ապահովման գումարի վճարումն իրականացվել է լիազորված մարմնին որոշումը ներկայացվելու վերջնաժամկետը լրանալուց հետո, բայց ոչ ուշ, քան լիազորված մարմնի կողմից մասնակցին ցուցակում ներառելու համար սահմանված քառասնօրյա ժամկետը լրանալը, իսկ որոշումն ստանալուն հաջորդող քառասուներորդ օրվա դրությամբ մասնակցի կողմից որոշման բողոքարկման վերաբերյալ հարուցված և չավարտված դատական գործի առկայության դեպքում՝ ոչ ուշ, քան տվյալ դատական գործով եզրափակիչ դատական ակտն ուժի մեջ մտնելը, ապա պատվիրատուն դրա մասին գրավոր տեղեկացնում է լիազորված մարմնին, որի հիման վրա մասնակիցը չի ներառվում ցուցակում:

ՏԵՍՈՒՆ

Մ. ՅՈՒ. ԱԴԱՄՅԱՆ

Կատ.
Գնումների բաժին
Հեռ. 010-655930(2262)